

Նկ. 11



Նկ. 12

ՆՈՐԱՅԱՅՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԵՐՁՈՐԵԱՆ ՔԱՐԱՆՁԱՒԻՑ
(Նախնական դիտարկում)

Արտակ Սովսիսեան

Այս տարուայ յուլիսի 23-ին Քաշաթաղի շրջանի[1] քարանձաւային կառոյցների ուսումնասիրութեան ընթացքում Հայաստանի անձաւագիտական կենտրոնի արշաւախումբը երկրաբան-քարանձաւագէտ Սամուէլ Շահինեանի գլխաւորութեամբ Բերձոր (նախկինում՝ Լաչին) քաղաքից 18 կմ դէպի հարաւ գտնուող մի քարանձաւում յայտնաբերեց անյայտ գրանշաններ եւ սեպագիր յիշեցնող արձանագրութեան մնացորդներ (նկ. 1):

Յայտնաբերուած նորոյթները չափագրելու, լուսանկարելու եւ հետազօտելու նպատակով, Սամուէլ Շահինեանի եւ Էմին Մկրտչեանի ընկերակցութեամբ, Քաշաթաղի վարչակազմի համակողմանի աջակցութեամբ աշխատանքներ սկսեցինք օգոստոսի 17-ին[2]:

Քարանձաւն ունի 11,5 մ երկարութիւն, ամենալայն տեղում 5,5 մ է: Մուտքը եռանկիւնաձեւ է՝ 1,6 մ բարձրութեամբ (քարանձաւի յատակագիծը տե՛ս նկ. 2): Քարանձաւի հարաւային պատին՝ մուտքի մօտ, պահպանուել է սեպագիր արձանագրութեան մի բեկոր: Սեպագրից աջ փորուած են անյայտ ծագումով ու նշանակութեամբ գրերը, որոնք դեռեւս վերծանուած չեն:

Արձանագրութեան պահպանուած հատուածը գտնւում է յատակից մօտ 40 սմ բարձրութեան վրայ: Հասկանալիօրէն, արձանագրութեան սկզբնամասը չէր կարող այդքան ցածում լինել (մուտքի բարձրութիւնը 1,6 մ է): Պահպանուած սեպանշաններց վեր (հաւանաբար վաղ քրիստոնէական ժամանակաշրջանում) փորուել է մի մեծ խորշ, ինչի հետեւանքով ոչնչացուել է արձանագրութեան մեծագոյն մասը: Սկզբնապէս սեպագիր արձանագրութիւնը մուտքի աջ կողմի պատին պէտք է փորուած լինէր վերեւից ներքեւ եւ կարող էր զբաղեցնել մինչեւ 1,2x0,6 մ տարածք:

Սեպագիր արձանագրութիւնից պահպանուել է մէկ ոչ ամբողջական տող: Տողի բարձրութիւնը 5 սմ է: Պահպանուած հատուածը զբաղեցնում է 13 սմ տարածք: Սեպագիր նշանները դասական բիւրինա-ուրարտական են՝ սուրանկիւն եռանկիւնիկների տեսքով (ի տարբերութիւն միջագետքեան սեպագրերի, որոնք մեխաձեւ են): Ընդամէնը պահպանուել են ինը սեպիկներ, որոնք, հաւանաբար, մասն են կազմել 4 կամ 5 սեպագիր նշանների (նկ. 3, գծանկարը՝ նկ. 4):

Նշաններից[3] առաջինը թերի է. պահպանուել են մէկ ուղղահայեաց գծի վրայ գտնուող սուր անկիւնով դէպի ձախ ուղղուած երկու փոքր սեպիկներ, որոնցով աւարտւում են bal, ga, gu, ul վանկանշաններն ու «եզ» (GUD) որոշիչ-գաղափարագիրը (դետերմինատիւ):

Երկրորդ նշանը a վանկի նշանն է, որն իբրեւ գաղափարագիր գործածուելիս ունեցել է «ջուր» եւ «որդի» իմաստները:

Երրորդը բաւական թոյլ նշմարուող նշան է. դժուար է որոշակի ասել՝ դէպի ներքեւ ուղղուած երկար սեպանշան է, թէ սուր ծայրը դէպի ձախ ուղղուած մեծ սեպ: Առաջին դէպքում այն կարելի է ընթերցել որպէս «1» թուանշան, diš կամ

© National Library of Armenia

tiš վանկանշան, արական անուան կամ ցեղանուան որոշիչ-դաղափարագիր (դետերմինատիւ): Երկրորդ դէպքում այն կ'ընթերցուի «10» թուանշան կամ u վանկանշան: Նշուածներից բացի, կայ մի բարդութիւն եւս: Այս թոյլ նշմարուող նշանին յաջորդում է սուր ծայրը դէպի ձախ ուղղուած մեծ սեպ («10» թուանշան կամ u վանկանշան): Եթէ նշանը կարդացուի յաջորդի հետ միասին, կը ստացուի լրիւ այլ պատկեր. առաջին դէպքում՝ «70» թուանշան, երկրորդում՝ «20» թուանշան կամ «արքայ» որոշիչ-դաղափարագիր (դետերմինատիւ):

Պահպանուած վերջին նշանը նոյնպէս թերի է. առկայ մասնիկով են սկսւում šú եւ su վանկանշանները (առաջինը կիրառւում է նաեւ որպէս «այն» դերանուն), «կախարդանք», «քուրմ» (pN), «ուրախութիւն» (H8L), «այրել», «կրակ» (GIBUL) որոշիչ-դաղափարագիրը:

Դժբախտաբար, պահպանուած մասի չափազանց փոքր եւ նշանների բազմիմաստ լինելը հնարաւորութիւն չեն տալիս հասկանալու արձանագրութեան սկզբնական նշանակութիւնը. կարելի է միայն ենթադրել, որ այն ունեցել է պաշտամունքային նշանակութիւն: Դրանով հանդերձ, պէտք է նշել, որ Արցախից սեպագիր արձանագրութեան յայտնաբերման փաստն արդէն իսկ կարեւոր երեւոյթ է:

Յատուկ ուշադրութեան է արժանի նաեւ արձանագրութեան առկայութիւնը քարանձաւի ներսում, ինչն ընդհանրապէս հազուադէպ հանդիպող երեւոյթ է, իսկ Վանի թագաւորութեան քարանձաւներում մինչ այս նման միայն մէկ դէպք էր յայտնի[4]:

Ե՞րբ եւ ո՞ւմ կողմից կարող էր թողնուած լինել սեպագիր արձանագրութիւնը:

Վանի թագաւորութեան մինչ օրս յայտնի բնագրերից մեզ յայտնի է, որ Արցախի տարածքը եւս գտնուել է Տուշպայ-Վանի տիրակալների իշխանութեան ներքոյ, իսկ խնդրոյ առարկայ քարանձաւը գտնուել է Մեծ Հայքի Արցախ նահանգի Բերձոր գաւառի տարածքում:

Արցախն առաջին անգամ «Ուրտեխէ» անուանաձեւով յիշատակւում է Սարդուրի Բ-ի (Ք.ա. 764-735 թթ.) նուաճումների կապակցութեամբ[5]: Թէ այդ անուան տակ ինչ տարածք է ընդգրկուել, դժուար է ասել: Այնուհետեւ Արցախի տարածքը յիշատակւում է Ռուսայ Ա-ի (Ք.ա. 735-713՝ թթ.) թողած Ծովինարի (Սեւանայ լճի հարաւարեւելեան մերձափնեայ շրջանում) արձանագրութեան մէջ, որի համաձայն՝ արքան նուաճել է Սեւանայ լճից արեւելք ընկած տասնինը երկրներ[6]:

Այսպիսով, թէպէտ արձանագրութեան պահպանուած հատուածից հնարաւոր չէ դուրս բերել որեւէ կապակցուած ընթերցում, Բերձորից սեպագրի յայտնաբերման փաստն ինքնին կարեւոր երեւոյթ է: Սա Արաքսից հիւսիս ընկած տարածքից գտնուած եւ ներկայումս գոյութիւն ունեցող ամենաարեւելեան սեպագիր արձանագրութիւնն է[7] եւ ցոյց է տալիս, որ Արցախը (Լեռնային Ղարաբաղը) եւս ընդգրկուած է եղել Վանի թագաւորութեան կազմի մէջ[8], ապա ժառանգաբար անցել հայկական միւս թագաւորութիւններին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, նախկինում՝ Լաչինի շրջան:

2 Երկու արշաւախմբերի կատարած աշխատանքի մասին տե՛ս Սամուէլ Ծահինեանի՝ սոյն հատորում զետեղուած յօդուածում:

3 Վանի թագաւորութեան սեպագրերի առաւել ամբողջական նշանացանկերը՝ բացատրագրերով, կարելի է տեսնել Ֆ. Վ. Քեօնիգի եւ Գ. Ա. Մելիքիշվիլու աշխատութիւններում (**König F. W.**, *Handbuch der chaldischen Inschriften*, I-II, Graz, 1955-1957, աղ. 103-105; **Меликишвили Г. А.**, *Урартские клинообразные надписи*, М., 1960, էջ 36-44), որոնք ներկայումս կարիք ունեն լրացումների:

4 Դա Վանի ժայռի հիւսիսային մասում փորուած արհեստական քարանձաւն է, որի մուտքի աջ կողմում, ինչպէս Բերձորեան քարանձաւում, առկայ է սեպագիր արձանագրութիւն՝ գրուած Մենուա արքայի անունից (**Пиотровский Б. Б.**, *Ванское царство (Урарту)*, М., 1959, էջ 213, 216, նկ. 64; **M. Salvini**, *Tušpa, die Hauptstadt von Urartu*, տե՛ս Das Reich Urartu (Hrsg. Volkert Haas), Konstanz, 1986, էջ 35-37):

5 **Арутюнян Н. В.**, *Корпус урартских клинообразных надписей*, Е., 2001, N 250.

6 **Арутюнян Н. В.**, *Корпус урартских клинообразных надписей*, Е., 2001, N 389.

Տասնինը երկրանուններից մէկը, որ նախորդ ուսումնասիրողների կողմից ընթերցուել է Ալզիրա, Ց. Հ. Կարագեոզեանը վերջերս առաջարկեց կարդալ Բերզիրա՝ նոյնացնելով Բերձոր գաւառանունը (**Կարագեօզեան Ց. Հ.**, *Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում). Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, հտ. I, գիրք 1, Ե., 1998, էջ 191-192, 333):

7 Չենք հաշուում Խոջալուից գտնուած Ասորեստանի Ադադ-Ներարի արքայի անունը կրող արձանագրուած ուշունքահատիկը, որը, թերեւս, պատահաբար է յայտնուել Լեռնային Ղարաբաղում:

Գրում ենք «ներկայումս գոյութիւն ունեցող», քանի որ Արցախի տարածքից յայտնի որոշ արձանագրութիւններ ներկայումս անհետացել են, բացի այդ կան նաեւ տեղեկութիւններ նորերս գտնուած բնագրերի մասին, որոնք դեռեւս լոյս չեն տեսել (տե՛ս, օրինակ, Կարագեօզեան Ց. Հ., *նշ. աշխ.*, էջ 316, 319):

8 Այդ են վկայում նաեւ հնագէտների կողմից Ֆիզուլիի շրջանում յայտնաբերուած բիահնաուրարտական դամբարանադաշտի հետքերը (տե՛ս **Սիմոնեան Ց., Գնունի Ա.**, *Արցախի ազատագրուած տարածքների հնագոյն, նախաքրիստոնէական եւ միջնադարեան բնակավայրերի ուսումնասիրութիւնը 1993-1995 թթ.*, Հայաստանի Հանրապետութիւնում 1993-1995 թթ. հնագիտական հետազօտութիւնների արդիւնքներին նուիրուած 10-րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Ե., 1996, էջ 70):

© National Library of Armenia

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3



Նկ. 4

© National Library of Armenia